

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»  
պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորատ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 1**

**21 փետրվարի 2019 թվականի**

**Հին կրթական ծրագրերով սովորած 3-րդ և 4-րդ կուրսերից հեռացված  
կամ իրենց դիմումի համաձայն ազատված նախկին ուսանողների  
ուսանողական իրավունքները վերականգնելու մասին**

Լսելով և քննարկելով «Հին կրթական ծրագրերով սովորած 3-րդ և 4-րդ կուրսերից հեռացված կամ իրենց դիմումի համաձայն ազատված նախկին ուսանողների ուսանողական իրավունքները վերականգնելու մասին» հարցը՝ ռեկտորատը

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2019 թվականի փետրվարի 18-ի N 01/06.2/2181-19 գրությունը՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հին կրթական ծրագրերով սովորած 3-րդ և 4-րդ կուրսերից հեռացված կամ իրենց դիմումի համաձայն ազատված նախկին ուսանողներին թույլատրել իրենց ուսանողական իրավունքները վերականգնել առավելագույնը 2 կիսամյակ հետ՝ հաշվի չառնելով առարկայական տարբերությունների կրեդիտների քանակը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից:

**Ռեկտորի պաշտոնակատար՝**

2019 թ. փետրվարի 21  
Երևան

**Ռ. Ա. Հայրապետյան**